

Պատրաստ է արդյոք Հայաստանը լիարժեք դիմակայել թրաֆիքինգին

Բերանն արնոտ մարդակերը են անբան  
Հագար դարում հազիվ դառավ Մարդասպան,  
Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար  
Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

(Հ. Թումանյան)

Սա իմ երկիրն է՝ աշխարհի քարտեզի վրա արցունքի մի կաթիլ: Այս քարե երկրում է ծվարել քարի պես ամրակուռ ոգի ունեցող իմ ժողովուրդը, որ դարեր ի վեր կերտել է բարոյական իր վեճն նկարագրի: Դարերը չեն պղծել ու փչացրել իմ ժողովրդին. հայ կինը, մայրը, աղջիկը միշտ եղել են առաքինության ու ամոթխածության մարմնացում, հայ տղամարդը՝ ընտանիքի հենասյուն ու հայրենիքի զինվոր, հայ երեխան՝ իմ փոքրիկ հայրենիքի մեծ ապագան... Այսօր, սակայն, թե 21-րդ դարամուտը ստրկության իր բազմազան ճիրաններն է մխրճել իմ երկրի սիրտը և փորձում է սուտ ու պատիիր խոստումներով ահագնացնել հասարակական մի ախտ, որ կոչվում է թրաֆիքինգ:

Գլոբալացումը կոչված է զարգացնելու մարդկության տնտեսական, քաղաքական ու մշակութային առաջընթացը, ոչ թե այն դարձնելու ինչ-որ հանցավոր խմբերի հանցավոր նպատակների առարկա: Թրաֆիքինգը կամ «սպիտակ ստրկությունը» խորթ ու անհարիր է մեր հասարակությանը, բայց մեր հայրենակիցները ևս, ցավոք, գայթակղվելով փող վաստակելու խոստումներով, խաբեությամբ, առևանգմամբ ու այլ միջոցներով ընկնում են ծուղակելը:

Այսօր մեր հասարակության մեջ սովորական են դարձել մարմնավաճառության, տաժանակիր աշխատանքների, առևանգման ու բռնի փոխադրման և, ինչու՞ չէ, օրգանների հեռացման ու վաճառման երևույթները: Ցավալի է, որ հազարամյակների հարուստ պատմություն ունեցող իմ ժողովրդի մեջ համաճարակի նման ահագնանում է թրաֆիքինգը: Ցավալի է, որ «Հայոց աշխարհի փափկասուն կանանց» դիմագիծը մարմնավորող հայ կինը, կորցնելով իր առաքինությունն ու ամոթխածությունը, երբեմն բռնի, երբեմն կամավոր բռնում է արտերկրի հրապուրիչ ճանապարհը՝ բարոյալքությունն ու մարմնավաճառությունը դարձնելով եկամտի աղբյուր: Տեղին է հիշել.

Բայց մեր կանա՞յք... ու՞ր Եղիշե,

Ու՞ր մեր տիկնայք փափկասուն...

Յուրօրինակ թրաֆիքինգ են բռնարարքները ընտանիքում: Ծանր կենսապայմանները, գործազրկությունը դրդում են ընտանիքի հորը՝ փողոց նետելու անչափահաս երեխային՝ ստիպելով փող մուրալ կամ գողություն անել: Հայ մարդը միայն իր խելքով ու բազկի ուժով է վաստակել իր հանապազօրյա հացը և զոհացել Աստծո տված մի կտոր հացով:

Ու՞ր մնաց հայի ձեռք դիմագիծը, հայե՛ր...

Ես գիտեմ, որ իմ երկիրը շատ ավելի ծանր ու դժվարին մղձավանջներ է հաղթահարել : Ու որքան էլ Եվրոպայան փորձի իր կեղտոտ բարքերով ներխուժել Հայաստան, Հայաստանը չի որդեգրի քաղքենի ու բարոյալքված Եվրոպայի հասարակական ախտը՝ թրաֆիքինգը:

Մեր ժամանակներում, ճիշտ է, ճգնաժամային այս ծանր պայմաններում գուցե «սպիտակ ստրկությանը» փորձում է տարածվել Հայաստանում, բայց այն երբեք տիրապետող չի դառնա:

Համոզված եմ, որ հայը կսթափվի: Այսօր տեղեկատվական միջոցները, միջազգային ու տեղական համապատասխան կազմակերպությունները, հեռուստաթերթերը գործադրում են բոլոր ջանքերը՝ կանխելու թրաֆիքինգը մեր երկրում: Այն կանխելու առաջին նախապայմաններից մեկը Հայաստանի տնտեսական, սոցիալական պայմանների զարգացումն է, ինչը մեր կառավարության այսօրվա առաջնակարգ խնդիրն է:

Ի վերջո, թրաֆիքինգի կանխումը յուրաքանչյուրիս խնդիրն է. չթողնենք, որ փողի շլացնող փայլը կուրացնի մեզ, և բռնենք «մարդակեր գազան մարդու» ձեռքը՝ ասելով. «Մի՛ կործանիր քեզ նմանին»:

Ավագյան Սևակ Կողբի №2 միջնակարգ դպրոց X դասարան